



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅԵՎ ՆԻՄԱՆԴ


# ԶՈՒՏԿԻ ԴԵՐ

(Թեզիր զեկուցողների համար)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան - 1930



ԿՈՐԴԻՐՎԱԾԻՆ, ՀԵՅՎԱՐԴԻՆ ՄԱՐՏՆՅԱԳ, ԱՆԱՍՎԱՐ-  
ԴԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՀԱՆԺԵՆՈՒԹՅՈՒՆ

---


2

# ԶԱՏԿԻ ԴԵՄ

(Թեղիր զեկուցողների նամար)

$A \frac{T}{\eta/\theta_X}$

\_\_\_\_\_



---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Ընդունված - 1930

Հրատ. № 1284

Գրառեալ. № 5097 (բ) Պատվ. № 427 Տիրաժ 3000

---

Գետհրատի Յերկրորդ տաղարան, Յերևանում.

## ԸՆԴՌԵՄ ԶԱՏԿԱՎԱՆ ԱՌԱՍՏԵԼՆԵՐԻ, ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՄ ՏԱՐՈՒՄ ԼՐՁՈՒՆԳՈՎ

1. Առաջիկա հտկազատկական կամպանիան պիտի կը ի քաղաքական, մարտական բնույթ։ «Զատիկը» վաղուց ե ինչ նախապատրաստվում եր մեր դասակարգային թշնամիների կողմից և լինելու յե՛ նեպմանական-կուլակալին դասակարգի, սրանց առաջնորդ Դաշնակցության կրօնի դրոշի տակ կատարած դիմադրության մի փորձ ընդդեմ Խորհրդային Հայաստանի արագատեմալ ինդուստրիացման, գյուղատնտեսության կոլլեկտիվացման, կուլտուրական հեղափոխության ու լայն բանվորա-գյուղացիական մասսաների ստեղծագործ շինարարության։

2. Գարնանացանի կամպանիալին, գյուղատնտեսության հին ձեռնությունների ու աղքատության դեմ ուղղված մեր հարձակմանը՝ յեկեղեցին ու կրօնը դիմադրում են նաև պրոպագանդով և ապա բացարձակ հակախորհրդակին վոտնձգություններով։

Պրոպագանդի հիմնական նպատակն ե՛ դարեր շաբունակ մութ ու խավար գյուղացիությանը «քրիստոսի լուսո ճամբան ցույց տալ»—այն ե՛ «հույսդ բարձրացի», ամենակալի վրա դիր», «աշխարհային հանցանքներից»— գարնանացանից, կոլխոզներից, կումսումոլից հեռու մնալ, վորովհետեւ — «մենք միայն հյուր ենք այս աշխարհում»,

«Քո յեղբայրները յիրկնային կարճ ճամպի ուղեկիցներ են միայն, վար գնում են հավիտենական կյանք...»։ Ել ի՞նչ կարիք կա պայքարել կուլակի, շահագործողի դեմ («խաղաղություն ամենեցուն»), ինչ կարիք կա հինը քանդել, նրա տեղ սոցիալիստական նոր կյանք ըստեղծել...»

Ահա յեկեղեցու «քարոզների»—հիմնական առանցքը։

Բացի այս ծավալուն ոլրոպտդանդից, յեկեղեցին միացած արտաստիճանի շպիոնաժի և ներքին հականեղափոխական ուժերի հետ, ամեն ինչ անում է, քաղաքական և տնօւսական հարգանձներ հասցնելու մեր վերելքին։ Ահա փաստեր. վերջերս եր, վոր Ռուկրայնալում բացվեց խոշոր հականեղափոխական կազմակերպությունը—«Ռուկրախնակի ազատազրման միությունը», վորի ղեկավարներն ելին նախկին Պետրովյան մինիստր՝ Շենքեմովը, շեպիսկոպոս՝ Զեխովը կից և քաղմաթիվ գեներալներ, պոլկովնիկներ։

Ռուկրախնայի և մուսաստանի մի շարք քաղաքներում, անցյալ սեպտեմբերին, բացվեցին «մոռուղովդի միության» սեվ—հարլուրակային վոհմակներ, վորոնց ղեկավարները ամենուրեք յեղիսկոպոսներն ելին։

Լենինգրադում Պետքաղվարչությունը հայտնաբերեց «վոսկըսենիյե» հականեղափոխական միությունը, վորը սերտ կազ ուներ. Պարիզի ցարական եմիգրացիայի հետ և նպատակ եր դրել կործանել խորհրդակին խշանությունը, տերը ուներ կատարել և այլն։ Միջին Ասիայում, մուսուլման հեղեղորականությունը անդլիական վոսկու ոգնությամբ Ավղա-

Նիստանի հարեան շրջաններում հսկալական պլու-  
վակացիա լեր ծավալել: Աղբբեյջանում նույնպես բաց-  
վեց պանիսլամական հակաճեղափոխական կազմակեր-  
պություն, վորէ անդամների 90 տոկոսը մոլլաներ  
եցին:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Դաշնակցու-  
թյունը սկսել և ավելի ուժեղ թափով ողտադործել  
յեկեղեցին:**

Յեկեղեցին միակ լիգալ ասպարեզը լինելով,  
նրա խորաններում թագնված դաշնակ-կուլակային  
տարբերը, պրովակացիաներ հն տարածում՝ պատե-  
րադմի, «նեղն ընկնելու», «գալիք սովի», գլուղա-  
ցիության ունեցած-չունեցածը դրավելու և ալլի մա-  
սին: Բազմաթիվ փաստեր կան, վոր յեկեղեցին դաշ-  
նակների հետ միասին՝ խանդարում և հարկացին գոր-  
ծը, զինակոչերը, փոխառությունները և այլ հակա-  
խորհրդային դավեր ու վոտնձգություններ ե լարում:

Մըս կողմից, վորպեսզի արտասահմանի զա-  
նազան յերկրներում ցըված բազմահազար հայ աշ-  
խառավորության համակրանքը, անկեղծ ձգտումը  
ստուցնի դեպի Խորհրդային Հայաստանը, Դաշնակ-  
ցությունը պրովակացիաներ և տարածում, թե ըալ-  
շիկները Եջմիածնին հալածում են, «Եջմիածնը սո-  
վամահ են», թե «Մայր Աթոռը Եջմիածնից Սուրբիա յե-  
տեղափոխվելու» և ալլն: Պրովակացիայից բացի՝ նազդ  
նպատակ ել կա. «սովամահ Եջմիածնին» ոգնելու  
պատրվակով՝ հանգանակություն են անում և հակա-  
խորհրդային դավերի համար տալիս դաշնակ խմբա-  
պետներին:

**Հայտնի յե, վոր Եջմիածնին ել իր վեղարավոր**

կոնսուլների (այսպես կոչված թեմական տռաջնորդների) միջոցով արտասահմանում միշտ ոգնել են Դաշնակցությանը. — (Մելիք-Թանգյանը Պարսկաստանում, Թիրայր Ամերիկայում և այլն) դեռ թարմ ե մեր հեղափոխության պատմության մեջ, յեկեղեցու խաղացած սև հակառակսատավորական գործը, Ամենայն հայոց կաթողիկոսի 1920 թ. մայիսյան ապրանտամբության առթիվ հրատարակած կոնդակը զրում եր. — «Մենք, ինչպես և մեր յերջանկահիշատակ նախնիքները, վոր աշխատանք են թափել տաճկահայ գատի համար, լավ որերի հույսի ակնկալությամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ բոպեներին: Անհայտ, անորոշ գաղափարներով տարված մարդիկ, գավեր են լարում՝ ալայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը: Պետք ե համախմբել հայրենի հանրապետության պաշտպանության գործի շուրջը, փրկել հայրենիքը...»

Հետադարձում, 1921 թ. փետրվարի ավանտյուրայի ժամանակ հարցուրավոր տերտիարիներ խաչն ու մասնակի ձեռքներին, պայքարում եյին՝ հանուն Դաշնակցության:

Հայ զլուսավորչական» յեկեղեցուց հետ չի մնացել նաև «կաթոլիկ ուղղափառ» յեկեղեցին, վորի պետն ե Հռոմի պապը և վորն այսոր (Թիոս Ա) իր կոնդակով «խաչակրոս արշավանք» ե քարոզում Խորհրդադային Միության գեմ: Այդ կաթոլիկ յեկեղեցին ուներ Անդրկովկասում իր գործակալները, հանձինս կաթոլիկ վարդապետների, վորոնք սև աշխատանք եին տանում ընդդեմ պրոլետարիատի, հակահեղափոխական ակտիվ գործ կատարում, իրենց գավերով ու շպիոնագով սպասարկում ԽՍՀ Միության դեմ պա-

տերազմի պատրաստվող միլիոնարիստներին ու կա-  
պիտալիստական պիտություններին Այդ տիբրահոչակ  
հականեղափոխականների շարքին են պատկանում  
ոսուրը հայրեր» Տեր-Աբրահամյան, Բագրատյան և  
Ակինյան, վորոնք իրենց պատի, Պիոս 11-ի որհնու-  
թյամբ և ֆաշիստական պետությունների վոսկիներով  
կաշառված՝ հակախորհրդավին պրոպագանդ ելին մղում  
մեղանում։ Կաթոլիկ պատի այդ գործակալները գու-  
շակություններ են անում, թե Խորհրդավին իշխանու-  
թյունը քալքայվում է և մոտիկ և կործանումը, վորից  
հետո կլինի «մի հոտ և մի փարախ», իմա պատի  
գլխավորությամբ։ Մյուս կողմից Վատիկանի այդ  
ուսագլուխ դավադիրները իրենց գաղտնի գործելա-  
կերպով աշխատում եյին իկանար ածել պատի և կա-  
թոլիկ կարդինալների (արքեպիսկոպոսների) քաղա-  
քական ծրագրները, այն և Մերձավոր Արևելքի և մաս-  
նավորապես Անգրիովկասի ժողովուրդները դարձել  
մի զենք արևմտան պետությունների ձեռքին։ Այդ  
նպատակով նրանք գաղտնի լրտեսությամբ ելին պա-  
րապում, զրպարտիչ ինֆորմացիա մատակարտում  
չուվմի ֆաշիստական լեկեղեցուն։

Ահա ինչո՞վ ելին զբաղված քըրիստոնեակոն  
սեր» և բարոյականությունն քարոզող սկագլուխները,  
Կրօնը, յեկեղեցին նրանց համար մի շիրմա լիր, վո-  
րի հետնը զարան մտած՝ նրանք նյութում եյին մի սկ  
գործ ընդզիմ աշխատավորության և ջանքեր թափում  
շահագործողների տապալված ոեժիմը նորից վերա-  
կանգնելու։

Ահա այս փաստերը ամենից առաջ ապացուցում  
են, վոր հակակրօնական աօխատանքը չպիտի առվիք  
կամպանիան ձեվով, նա մեր հասարակական-բազա-  
րական աօխատանքների մի եխմնուկան բնագա-

վառն եւ Հակակրոնական աշխատանքը պիտի լինի  
մարտական, և մյուս կողմից ճկուն, տեղի կոնկրետ  
պայմանների հաշվեառման հիման վրա։ Մարտնչող  
Անսաստվածների Միությունը պիտի դառնա հղոր և  
մասսայական մի կազմակերպությունն նրա ղեկավար  
մարմինները և բոլոր բջիջները պիտի ամբապնդվեն,  
կուսակցության ղեկավարությամբ, կոմմունովի և պրոֆ-  
միությունների գործնական աջակցությամբ՝ սիստե-  
մատիկ և խորացրած աշխատանք պիտի ծավալվի  
լոյն աշխատավորական մասսաների շրջանում։

Վճռական հարված պիտի տրվի այն աջ, ոպ-  
ալորտյունիստական տեսակեաներին, ըստ վորոնց՝ թե-  
րագնահատվում ե, ապաքաղաքական ու անվողնաշար  
վերաբերմունք ցուցաբերվում դեպի հակակրոնական  
մարտական պալքարը։

Ներկա հակակրոնական կամպանիայի հիմնական  
լոգունգները պիտի լինեն. —

— Ընդդեմ կրոնի, ղեղի հնգամյակի և աշ-  
վա կատարումը,

— Զաւկական ոռները վերածենք ինքուստրիաց-  
ման որերի։

— Զաւկական հարբած ոռների փոխարեն ամ-  
բողջ զյուղացիական մասսաներով զարկ օալ զար-  
նանացանի յեկ կոլեկտիվների ամբապնդմանը։

— Գյուղացիությանը կոչ անել զատկական տո-  
ներին՝ ամբողջ գյուղի համար հասարակական կարե-  
վոր աօթատանքներ կազմակերպել

— Առ մի գործալիող, հարբեցող։

4. Միան դասակարգութին կռվի, միան կոմմու-  
նիստական կուսակցության ղեկավարությամբ, մի-  
այն սոցիալիստական շինարարության միջոցով, հըն-

գառնակի ուղիով ե, վոր Խորհրդային Միությունը արագատեմպ թափով հասնելու յի և անցնելու կապիտալիստական պետություններից։ Հնդամյակը ծածկելու յև յերկիրը զործարանային հսկաներով, տասնյակ հազարավոր կիլոմետր յիրկաթուղիների ցանցով, բազմաթիվ ելեքտրոկայաններով, միացնելու յի ցրված, վոշիացած գլուղացիական անտեսությունները՝ կուխողներում, մեծ չափերով բարձրացնելու յև լայն բանվորական աշխատավորական մասսաների կուտառուրական մակարդակը։ Հնդամյակի առաջին աարվա արդյունքները կինդանի փաստեր են, վոր կոմկուսակցության ղեկավարությամբ՝ մենք սրբնթաց թափով առաջ ենք գնում սոցիալիզմի կառուցման ուղիով։

5. Մեր սոցիալիստական շինարարության հաղթական վիրելքը վոչ թե կատարվել ե կրոնի քարոզած ևլերկիր խաղաղություն ի մարդիկ հաճություն» պայմաններում, այլ բուրժվա-կուլակային դասակարգի, նրանց սև գրոշ Դաշնակցության դիմ մղվող դասակարգակին պայքարի պայմաններում։ Յերկրի ինդուստրիացման, կոլեկտիվացման հսկա հորձանքը վոչնչացնում ե կապիտալիզմի մնացորդներն ու արմատները։ Անշուշտ ինչպիս միշտ այս անդամ ել մեռնող դասակարգը կամովին չի դիմում իր դիրքերը և համառ ու կատաղի դիմադրություն ե ցույց տալիս սոցիալիստական արշավին պայքարում։ Այդ հակառակորդ դասակարգը և նրա կուսակցությունը, Փաշիստ-դաշնակները լայն կերպով ողտագործել են և պիտի ոդտագործեն կրոնը։ ԶԵ վոր կրոնը, կապիտալիզմի հիմնաքարերից, հազարավոր տարիներ շահագործման շղթաներն ամրապն-

դող զենքերից մեկն եւ Յեկեղեցին իր շուրջը համախմբած «նախիկին մարդկանց»—Փարաջավոր ու մառլուզերիստ—դաշնակ «լիազորական խորհուրդներով», այսոր Ֆի դիմակ եւ, վորի հետևում կուլակային—դաշնակցական տարրեջն իրենց դործն են կատարում, ավելի քան տերբեք դրանց ադիտ-պրոպն եւ հանդիսանում:

6. Մեր սոցիալիստական արշավը, վոչ միայն յերկրի ներսի նեպմանական-կուլակային դասակարգի կատաղի դիմադրությանն եւ հանդիպում, այլև Խորհրդային Միության վճռական վերելքը ինդուստրացման ուղղությունը, միլիոնավոր գյուղացիության կուլեկտիվացման ուղղությանը, մահացու հարված եւ իմպերիալիզմի՝ վորը հուզու կարած ԽՍՀՄ-ի «կապիտալիստական խաղաղ վերասերումից», շպիոնաժի, ռազմական ավանդուրաների, ֆնասարարության, տնտեսական ու Փինանսական բլոկադալի, չերվոնեցների կեղծման ու անվերջ անսահման պրօվակացիաների միջոցով գուրս եւ գալիս ԽՍՀՄ-ի գեմ: Մյուս պատճառը ներկայումս ծավալվող հակախորհրդային կամպանիանի արյունոտ վոտնձգությունների, դա Ամերիկայում և ամբողջ կապիտալիստական աշխարհում իմպերիալիզմի հիմքերը ցնցող համաշխարհական տնտեսական կրիզիսն եւ Արդեն այնքան սրվել են կտպիտալիստական պետությունների ներքին և արտաքին հարաբերությունները, վոր պացիֆիստական անվերջ համագումարների, «զինաթափման» կանֆերանսների քողի տակից միանգամայն պարզ կերպով յերեսում եւ համաշխարհական արյունուղղությունը մոլոխի դեմքը:

Ներքին հակասություններից, դործազրկության

(20 միլիոն) և սովոր մեջ հեծող միլիոնավոր պրոլետարական և գողութային մասսաների հորձանք ավող հեղափոխական վերելքից սարսափահար, համաշխարհային իմաստիալիքմը, կատազության փրփուրը բերանին, «խաչակրաց արշավանք» և կազմակերպում ինորդդալին Միության դեմ Դա նշանակում և «հաստրական կարծիք և մշակում», իդիոլոգիական հող և պատրաստում, խանգարելու սոցիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ-ում։ Շաբաթներ ե, ինչ Հոռմի Պիոս 11-րդ պապի հրամանով, բոլոր տղափի և բանգի լեկեցիներում, կոստյոլներում, տաճարներում, սինագոգներում, բուրժուազիայի, նրա վոսկեմեղալ օֆիցիանեցի քրիստոնուավոր, գեկոլատավոր և կիսամերկ կանանց ու նույն դերը կատարող սոցիալ-ֆաշիստների, մասնակցությամբ՝ մաղթանքներ են կատարվում ԽՍՀ Միության գեմ։ Այդ մաղթանքները, վոչին միտք ունեն կրոնի և խղճի ազատության իրը թե բռնադատման դիմչելներ այլ այլ մաղթանքը և պապի կողմից սկսած ամբողջ խաչակրաց արշավանքներին գեկավարում են հմուտ դիպլոմատները, վորոնք շատ լավ համոզված են, վոր խորհրդային հսկուն չի կարելի առաջալել՝ Պողոս-Պետրոս սբըերին, կույս Թելեղալին բողոքելով, խաչ ու խաչվառով, խունգ ու մոմով։

Բուրժուական քաղաքագետները, ուսումագետները գիտեն, վոր Խորհրդալին Միության դեմ դուրս գալու համար, ամենից առաջ հարկավոր են մասսաներ։ Դրա համար ել կապիտալի տուզերից սկսած, մինչև Հոռմի Պիոս 11-րդ պապն ու Անդրիայի «Քենաչիքերի արքեպիսկոպոսն ու ախրանկան, սոցիալ-ֆաշիստ Հիլֆերդիներներն ու ԱՅՆ Բառերները միայն

մի ուղղությամբ են աշխատառում՝ աշխատավորությունը, մեշտանության լայն զանգվածները, համաշխարհային տնտեսական ճգնաժամից քայլայլուղով մանր բուրժուական մասսաները «բարոլապես» վոտքի հանել, «խաչակրաց արշավ կազմակերպել» ԽՍՀՄ դեմ: Իսկ հետագայում ել՝ մի նոր պատերազմ, ինտերվենցիա լարել ԽՍՀՄ դեմ:

7. Ինչպես հայտնի յե՛ միջազգային սոցիալ-դեմոկրատիան ամիսներ ե, ինչ ամենաակտիվ կերպով մասնակցում ե իմպերիալիզմի նյութած հակախորհըրդային արշավին և սոցիալ-դեմոկրատիան ամեն տեղ ել լեռանդուն մասնակցություն ունեցավ «խաչակրաց արշավին»: Այսպես, Փրանսիական «սոցիալխոստները» Աեռու ԹԱՊՈՒՄի յեզ Թողենթելզի դեկավարությամբ կուտեապովշինայի առթիվ աղահանջում եյին կառավարությունից դիոլոմատիկական հարաբերությունները կտրել ԽՍՀՄ-ից: Բելգիական «սոցիալխոստներն» ահազին հակախորհդային կամպանիա սկսեցին խորհրդակին եքսպորտի դեմ: Իսկ գերմանական սոցիալ-ֆաշիզմը՝ ամենակատաղին ե. «Նոսկեյի-Զեվերինգի-Ցերգիբենի արյունառուշտ կուսակցությունը, վոր ներկալումս «հանրապետության պաշտպանության» քողի տակ պաշտպանում ե մոնարխիան՝—դլխատում հեղափոխական—մասսաները, հալածում նրանց առաջնորդ մարտական կոմկուսը, այդ կալղերական կուսակցությունը «խաչակիրների» առաջին շարքերումն ե կանգնել այժմ: Արդեն ներքին գործոց մինիստրը կեղտում մեղաղրանք ե բարձում Բերլինի մեր առևտրական ներկայացուցչության վրա, վոր իբր թե նա ակտիվ կերպով մտսնակցել ե «հարվածային կոմունիստական

գումարատակների և կազմակերպման գործին։ Այս պրո-  
վակացիալի ջախջախումից հետո, «Թորվերտուը» հայ-  
տարարեց, վոր իրը ԽՍՀՄ սուբսիդիա չե տալիս Գեր-  
մանիայի կոմունիստական մամուլին և բաժանորդա-  
դրվել ե «Բոտի Ֆանեա-ին 5,000 որինակ։

Այս և անվիրջ փաստերը դալիս են ասելու, վոր  
համաշխարհային սոցիալ-դեմոկրատիան ծանր որեց ե  
ապրում։ Այժմ, իերը խոշոր բուրժուածղիան բոլոր մեծ  
պետություններում սոցիալ-դեմոկրատիալի ձեռքով ե  
իրականացնում կապիտալիստական դաժան ռացիոնա-  
լացումը, անտեսուական կրիզիսի ծանր հետևանքները,  
լայն պրոլետարական մասսաների հեղափոխական վե-  
րելքին այլևս չի կարող պատճեց կանդնել սոցիալ-ֆա-  
շիզմը, նա փորձում է իր հին միջոցը՝ այսինքն իր  
յերկրների ներսը ծավալվող ու հորդացող դասակար-  
գալին կռվից մասսաների ուշադրությունը շեղել դե-  
ռի «համշխարհային կուլտուրալին» սպասնացող բայլ-  
ելիզմը, դեռի «խաչակրաց արշավանքը», «խղճի ու  
կըոնի բռնադատման յիրկրի» ԽՍՀՄ-ի դեմ։

8. Այժմ կտրելի չե ասել վոր Պիոս 11. րդ պա-  
պի ու իմպերիալիստական դիպլոմատիայի և նրա ակ-  
տիվ գործակից սոցիալ-ֆաշիստների կողմից կրոնի դրո-  
շի տակ կատարվող այդ հակախորհրդային կամպանիան  
վիճեց։ Նույնիսկ բուրժուական լրագրները («Մորնինգ  
Պոստը» և այլն) փաստերով պնդում են, վոր շատ հա-  
վատացիալներ բոյկոտի յին յենթարկում մաղթանք-  
ները, բազմաթիվ քաղաքներում, հենց լեկեղեցիների  
մեջ բանվորները բողոք ել են, խանգարել հակախոր-  
հրդային քարոզները։ (Լանկաշիրում, քորողի ժա-  
մանակ մի բանվոր հայտարարում ե. — «Յես բողոքում

եմ, այն ստի դեմ, վոր դուք տարածում եք: Դա քաղաքական սուտ ե, վոր ուղղված ե ԽՍՀՄ մեր ընկերների դեմ: Մենք կտաշտպանենք նրանց, յեթե վորեւ մեկը հանդզնի ձեռք մեկնել նրանց: Այս նշանակում ե, չնայած, վոր պապի և բուրժուազիալի ձեռքին գտնվում են միլիոնավոր լեկեղեցիներ, ամբողջ մամուլը, ռադիոն, կինոն, թատրոնները և մասսաներին մոլորեցնելու զենք դարձրած այլ և այլ միջոցներ, այնուամենայնիվ—հակախորհրդային լեկեղեցական այդ կամպանիան չտվեց նրա հեղինակների ակընկալած արդյունքները:

Այդ կամպանիան տապալեցին ամբողջ տշխարհի կոմմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ փողոց դուրս լեկած միլիոնավոր պրոլետարական բանվորները, վորոնց նպաստեցին Խորհրդային Միության բարեկամների ընկերությունները և պրոլետարական աղատամիտների միությունները:

«Խաչակրաց արշավանքին» ճակատ ավող պրոլետարական մասսաներն այսոր մի կողմից՝ հսկայական չափերով տմրապնդում են հակակրոնական պրոպագանդը և մյուս կողմից՝ պարքարի մեջ ավելի ակտիվացած լայն մասսաները վճռականորեն պաշտպանում են ԽՍՀ Միությունը: (Ահա փաստեր.—կաթոլիկական վորջ Վիյեննայում՝ վիյեննացի 7.000 յերիտասարդություն հրաժարվել ե հաղորդությունից: Կարդինալ Պիֆֆելը ստիպված ե լեղել խոստովանել, վոր «միքանի տարի հետո՝ բոլոր տաճարները կվերածվեն կինոների և կոնցերտի սրահների, զանգակներն ընդ միշտ կլոեն»: Բազմաթիվ քաղաքներում բանվորները մասսայորեն հրաժարվում են լեկեղեցուց, մտնում հակակրոնական կազմակերպությունների մեջ):

Այս «խաչակրաց արշավանքը» մի անգամ ևս լայն պլութեատարական մասսաների առաջ մերկացրեց սոցիալ-ֆաշիզմի զղվելի դեմքը. («Ֆորվերտսի» մարտի 14-ի Նոում՝ մենշևկիկ Գավրիեն գրում ե. — «Վոչ թե կաթոլիկական էնկեղեցուն պիտի պատկաներ հակախորհրդավին այս կամպանիավի ինիցիատիվան, այլ սոցիալ-դեմոկրատներին...»): Իսկ մեզ՝ Խորհրդավին Միության պլութատարիատին և ամբողջ աշխատավորությանն այս կամպանիան վոգեռություն ու մետաղյա վճռականություն ներշնչեց, վոր ավելի հետևողական կերպով պիտի առաջ տանել կապիտալիզմի արմատախիլ անհելու մեծ գործը, բուրժուատ-կուլակային գասակտրոգի վոչնչացումը և սիստեմատիկ պարագարը կրոնի դեմ:

Մենք պիտի լինենք մարտական, զգաստ մեր դիրքերում, մեր կարմիր Բանակը և միլիոնավոր պլութատարական և աշխատավորական մասսաները միշտ պատրաստ պիտի լինեն, կրոնական կամպանիաների յետերց իր ատամները կրծտացնող իմպերիալիստներին, գասակարգային թշնամուն, վճռական հակահարված հասցնելու:

Համաշխարհային պլութատարիատը մեզ հետ ե. նա թիկունքից ամուր կհարվածի գաղաղած իմպերիալիզմին: Համաշխարհային պլութատարիատի հարենիքի միասնական ուժերով պաշտպանելու աշալը ջություն ու պատրաստակամության հետ միասին՝ մեզ անհրաժեշտ ե ԽՍՀՄ ներքին ֆրոնտի ամբողջ լայնությամբ, անհողղող կերպով առաջ տանել լերկրի ինդուստրիացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, կուլտուրական հեղափոխության մեծ արշավը, ջախջախելով գասակարգային թշնամու ընդդիմագրությունը:

# ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԶԱՏԻԿԸ

(Պատմական ակնարկ)

Քրիստոսի նարության տոնի նօտակությունը

1. Ահա 20 դար շարունակ քրիստոնեական կը-  
րոնն ու յեկեղեցին տիրապետում են մարդկության  
մի վորոշ մեծամասնության մտքերի ու զգացմունք-  
ների վրա, կաշկանդում են հովատացրալների հոծ  
մասսաները ծիսական անմիտ պաշտամունքներով, սուտ  
հովատալիքներով, վայրենի նախապաշարումներով:

Քրիստոնեյական կրոնը զանազան թագավորնե-  
րի ու իշխանավորների ջանքերով հայտարարվել ե պե-  
տական և գերիշխող մլուս կրոնների վրա: Այդ պետա-  
կան դարձած քրիստոնեական կրոնի շնորհիվ՝ ինը-  
կրային թագավորները հոչակվեցին «աստծու ոծյալ-  
ներ», վորոնք պետք ե իշխան լերկնային թագավո-  
րի՝ «աստծու անունից» և կառավարեն, իրենց տիրա-  
պետության ներքո պահեն ժողովրդին, «հավատարիմ  
հպատակներին»:

Այդ որպանից քրիստոնեական կրոնն ու յեկեղե-  
ցական հաստատությունները դարձան տիրապետող  
դասակարգի ձեռքին մի հզոր զենք, վորով նա սրբա-  
գործում եր, աստծու և յեկեղեցու որհնության տակ  
եր առնում ամեն մի քաղաքական ճնշում, տնտեսա-  
կան անխնա շահագործումն աշխատավոր մասսաների  
վերաբերմամբ: Կրոնական հավատալիքները, քարոզ-  
ները, դավանաբանական ուսմունքները, յեկեղեցական  
արարողությունները, ծիսական հանդեաները, այդ ա-  
մենը ծառայում են մի նպատակի՝ պաշտպանել ու ար-

դարացնել շահագործող հասարակության գոյությունն  
ու իրավունքն և ներշնչել հնագանդություն, ստրկա-  
կան կամակատարություն, շահագործվողներին, կեղեք-  
վողներին:

Այդ ձևով հավատացլաներին կուրացնելու և իր  
աղղեցության ներքո պահելու միջոցներից մեկն ել  
շահագործող դասակարգի և սրան սպասարկող հեգեռ-  
բականության համար յեղել են յեկեղեցական տոնե-  
րը: Այդպիսի տոներն ահազին դեր են խաղում մեր  
ժողովրդական, մանավանդ գլուղական կենցաղում, հա-  
վատացլալ մասաների վրա ունեցած հոգեբանական  
աղղեցությամբ, ուսակցիոն հետևանքներով ու հակա-  
նեղափոխական ելությամբ: Ահա այս տեսակ տոներից  
մեկն ել «Քրիստոսի հարությունը», կամ ինչպես ժո-  
ղովուրդն ե ասում, «Զատիկն» ե:

2. Դարեր շարունակ քրիստոնեական աշխարհն  
ամեն տարի, գարնան սկզբներին տոնում ե «Քրիս-  
տոսի հարությունը»: Քրիստոնեական կրոնի քարո-  
զիչներն ու վարդապետները այդ տոնի շուրջը հրուսել  
են շինծու լեզենդներ, առասպելական պատմություն-  
ներ ու անհեթեթ հավատալիքներ: Այդ ամենին նը-  
րանք հարմարեցնում են տոնական շքեղ հանդիսակա-  
տարութման ժամանակակիցները, խորհրդավոր ծեսեր, վորոնք աչք կապող  
ու շլացնող ձեռքով գերում են հավատացլալ ամբոխի  
զդացմունքներն և ամրապնդում են կրոնական—յեկե-  
ղեցական աղղեցությունն:

Տերտերները, հիմնվելով ավետարանների վրա,  
հավատացնում են, թե Քրիստոսի հարությունը կա-  
տարված փաստ ե յեղել, պատմական իրողություն ե:  
Իսկ ավետարաններն, ինչպես վերջերս ապացուցեցին

գիտական ուսումնասիրությունները, Յ-րդ, Գ-րդ, նույն  
իսկ Ե-րդ դարի գրվածքներ են, մեզ անհայտ հեղի-  
նակների ձեռքով կազմված, զուրկ պատմական իս-  
կությունից։ Այդ ավետարանները հանդիսանում են  
նախաքրիստոնեական հավատալիքներից, հեթանոսա-  
կան կրօնական առասպելներից ու լեզենդներից հո-  
րինված ու վերամշակված ժողովածուներ, վորոնք, ա-  
ռաջին դարերի քարոզիչների ու հոգեորականների  
ձեռքով հարմարեցվելով քրիստոնեական կրոնի սկըզ-  
բունքներին, ծառայել են յեկեղեցական—կրօնական  
դասակարգի շահերին և դիրքի ուժեղացմանն հանդեպ  
քրմական դասի։

Ահա այդ ավետարաններին լեթի հավատանք,  
մեզնից 1900 տարի առաջ Հրեաստանում աշխարհ և  
լեկել Հիսուս Քրիստոսը, վոր իրը թե աստծու վորդի  
լեր, չարչարվել, թաղվել և ապա լերը որը հա-  
րություն ե առել։ Դրանով իրը թե Քրիստոս քավել և  
մարդկության մեղքերը, փրկել ե նրան աստծու ա-  
նեծքից, իրեն զոհաբերել ե հանուն մարդկության։ Քրիս-  
տոնյանները, հավատալով այդ առասպելական պատմու-  
թյանը, կարծում են, թե Քրիստոսի հարության տոնը  
զուտ քրիստոնեական ե, վոր սահմանված ե ի հիշա-  
տակ «փրկչի» մահվան ու հարության։

Քրիստոսի հարության այդ գաղափարն, իրեւ  
մարդկության մեղքերի ու փրկության համար անձնա-  
գոհությունը, դարեր շարունակ, մինչև այսօր ուժա-  
գործում են լեկեղեցու և կրօնի միջոցով տիրապետող  
դասակարգերը, վոր կեղեցվող, ճնշվող աշխատավոր  
մասսաները հլու-հնազանդ, համբերող լինեն այս կյան-  
քում, վորպեսզի փրկություն և յերշանկություն դրտ-

նեն հանդերձյալ կյանքում։ Մանավանդ նա նշանակություն և ստանում տասոր, մեր իրականության մեջ, յերբ դասակարգային պայքարն այնքան սրվել և թե կազիտալիստական յերկրներում և թե մեզանում, յերբ կազիտալիստն ու կուլակն իրենց որհասական ժամերն են ապրում և սոցիալիստական իր հսկա շինարարությամբ Խորհրդային Միության մեջ աշխատավոր մասսաները կործանում, տապալում են այն հնադարյան հավատալիքներն ու տնտեսական կենցաղը, վորոնցով կազիտալիստ-կուլակային դասակարգը զիտեր անարդել կեղեքել։

3. Ստկայն տերտերների քարոզների հանդեպ՝ պատմագիտական ուսումնասիրությունները ապացուցում են, վոր հարություն տռնող աստծու պաշտամունքը ծագել և քրիստոնեությունից շատ-շատ դարեր առաջ։ Աստվածվորդու հարության գաղափարը չի կարելի զուտ քրիստոնեական համարել։ Տակավին հազարավոր տարիներ քրիստոնեությունից առաջ՝ հեթանոսական կրօնների մեջ գոյությունն ունելին նման առասպելներ, այդպիսի հավատալիքներ, սահմանված ելին տոնակատարման նույնպիսի հանդիսավոր ծեսեր։ Այդ ամենն այն ժամանակվա քըմերի, հեթանոսական թագավորների, իշխանների և տիրող դասակարգերի ձեռքում նույն զենքն եր, նույն միջոցը ժողովրդական մասսաները հնագանդության մեջ պահելու, շահագործելու համար, ինչպես և այժմ քրիստոնեական աշխարհում։

Իսկ լիթե խորասուզվենք ավելի հնագույն նախապատմական դարերը, յերբ մարդկային հասարակական խմբավորումները դեռևս չեյին հասունացել կրո-

նական սիստեմերի մշտկման և խարխավում ելին սկզբնական հոգեպաշտության (անիմիզմի) ու մոդականության (մագիզմ) բնագավառներում, կտեսնենք, վոր ալդ հնավուրց ժամանակներն ել գոյություն ուներ հարության գաղափարը Ճիշտ այնպես, ինչպես վոր ներկայում Ավատրալիալի, Աֆրիկայի ու Ամերիկայի վայրենի շատ ցեղերի մեջ, վորոնք յերբեք վորեկ առնչություն չեն ունեցել քրիստոնեության հետ, հանդիպում ենք պրիմիտիվ ձևավորումով հարության գաղափարը:

### Հարություն առնող ասւլածները

1. Հնագարյան Յեգիպտասում գոյություն ուներ Ողիրիսի պաշտամունքը: Ողիրիսը, յիգիպտական կրոնի սկզբնական շրջանում, յերբ հավատալիքները զուտ բնապաշտական գույն ունեին, համարվում եր հացի, բուսականության աստված: Սա սովորեցրել եր մարդկանց յերկրագործության և ընդհանրապես հողի մշակույթ: Համաձայն այդ կրտնական ավանդության՝ Ողիրիսին սպանում ե նրա յեղբայրը, չար Տիֆոնը, և մարմինը կտոր-կտոր անում: Ողիրիսի կինը, Իզիդան, վոր միաժամանակ նրա քուլը եր, վորոնում ե մարմնի ալդ կտորները և, մեկիկ-մեկիկ գանհլով, թաղում ե: Իսկ վորդին՝ Հորուսը միացնում ե այդ թաղված մասերը և իր կախարդակուսն ուժով կենդանացնում ե իր հոր մարմինը: Ողիրիսի ալդ տոնը, վոր Դտեսում եր 5 որ, սկսվում եր նրանով, վոր տեղի լի ունենում հողի հանդիսավոր վարը, զոհաբերություն եր կատարվում, վորի ժամանակ մատաղացու կենդանին կտոր-կտոր հոշոտվում եր: Հանդիսակատարության գլխավոր

մասը կայանում եր նրանում, վոր իբր փնտոռում են Ողիրիսի մարմնի ցրված կտորները և թաղում, ուրախանալով, վոր գտնվել են կորած մասերը։ Այդ ժամանակ քուրմերը բարձրածայն աղոթում եյին վոր Ողիրիսը նորից կենդանանա և, հարություն առնելով վերադառնա նոր ուժերով։

2. Նույնպիսի պաշտամունք կար հին Փյունիկայում, վորտեղ հանդէս ե գալիս նույնպիսի նշանակություն ունեցող աստված՝ Աղոնիս անունով։ Վաղեմի փունիկյան կրօնական ավանդությունը պատմում ե, վոր նա վորսի ժամանակ սպանվել ե Վարազից, և իշտաբը, նրա սիրուհին դառնագին վողբում ե իր սիրեցլալ Աղոնիսի մահը։ Աղոնիսի առնը սկսվում եր վողբերով ու թաղման յերգերով՝ վոր ասում եյին կանաչը։ Սրանք վորոնում եյին և գտնում Աղոնիսին, այսինքն հանդիսավոր կերպով բերում եյին մոմից, տերրակոտից կամ այլ նյութից շինած, Աղոնիսին ձեռվացնող մի խրտվիլակ։ Զանազան ծիսակատարումներով այդ խրտվիլակը տանում եյին դեպի գետը կամ ծովը և նետում ջուրը։ Սրանով վերջանում եր հանդեսի տխուր մասն, և ապա սկսվում եր հանդեսի յերկուրդ արարողությունն ուրախ բացականչումներով, թե Աղոնիսը կենդանացել ե, նա համբարձել ե լերկինք…

3. Աղոնիսի նման աստված նույն պաշտամունքներով կար նաև Փոյլուկիալում (Փոքր Ասիա), վորտեղ նա հայոնի յեր Ատտիս անունով։ Ատտիսի պաշտամունքը տարածվում եր ամբողջ Փոքր Ասիայում և Միջերկրական ծովի հին հունական կղզիների վրա, գլխավորապես Լեսբոս, Թիոս, Կիպրոս, վորտեղ նա

հանդես և զալիս հոչակավոր Դիրոնիս անունով աստծու պաշտամունքի մեջ։ Դիրոնիսը համարվում եր Եբկրագործության, մանավանդ խողողի և զինու աստված։ Նրա տոնակատարութիւնները, վոր որդիատական ըընուլիթ ուներ, նույն հավատալիքներն ու գաղափարն ե պարունակում, ինչ վոր Ողիբիսն ու Ալոնիսը։

4. Հին Պարսկաստանում, քրիստոնեությունից շատ-շատ դարեր առաջ, պաշտվում եր Միթրա (Միհր) ասավածը։ Միթրան համարվում եր բուսականության, պտղաբերության ու արգասավորության աստված։ Նա ճանաշվում եր, վորպես մարդկության փրկիչ, նա սպանել և առասպեկլական ահուելի լեզին, վորի արյունից գոլացել ե Եբկրալին պատղաբերության ամրողջ ուժը։ Միթրալի պաշտամունքը խիստ մեծ չափերով տարածված եր Փոքր Ասիայում, ուսուկից անցել եր Հռոմ և, պատեղ գերակշռող ազդեցիկ դեր խաղալով հեթանոսական զանազան կրոնների մեջ։ մեծ աղղեցություն ե ունեցել նաև նոր ծագող քրիստոնեության հավատալիքների վրա։

5. Նման աստվածներ նույնպիսի հավատալիքներով ու տոններով գոյություն ունելին և այլ հնագույն հեթանոսական ժողովրդների մեջ Փոքր ու առաջավոր Ասիայում։ Ասորեստանում կար Թամմուղ աստվածը, Բաբելաստանում—Մարդուկը, և այլն, և այլն։

6. Այս բոլոր հեթանոսական հավատալիքներն ու պաշտամունքները՝ չարչարվող, մեռնող և հարություն առնող աստվածների մասին՝ գոյացել ու ծաղկել ելին հողագործ և խաշնարած ժողովրդների մեջ։ Գարնանամատի հետ աեղի ունեցող բնության արթնացումն, նրա արգասաբեր ուժերի վերածնունդը և սրա հետե-

վանքով ձեռնարկվող լերկրագործական աշխատանքները դառնում են այն առանցքը, վորի շուրջն են կենտրոնանում նախնի կրոնական հավատալիքները:

7. Յեթե ուշադրության առնենք հեթանոսական կրոնների, հարություն առնող աստվածների անձնավորումները, կտեսնենք, վոր այդ աստվածները գրեթե կորցրել են իրենց նախնական այն դեմքը, վոր անձնավորում ելին բնության ուժերը՝ արևը, ջերմությունը, ջուրը, պտղաբերությունը, վոր այնքան հատուկ եր նախադարյան լերկրագործական հավատալիքներին: Հեթանոսական քուրմերը, պատեանելով տիրապետող, շահագործող դասակարգին՝ խշանական, կալվածատիրական տոհմերին, ալդ յերկրագործական աստվածներին ել տալիս եյին դասակարգալին բնությունը, թագավորները, խշանները հոչակվում ելին աստվածային ծագում ունեցողը: Սրանց անսահման տիրակալության լենթարկվելու ելին ժողովրդական մասսաները, վորոնք անարտունջ, ստրկական հընազանդությամբ պետք ե տանելին ամեն մի բռնություն և անխնա շահագործումնի:

## ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ—ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԸԸ

1. Քրիստոսի հարության տոնն իր ելությամբ մի մասցորդ ե հնադարյան յերկրագործական տոնի: Նա իր ծագումով կրում ե զուտ տնտեսական—արտադրական նշանակություն, վոր սերտ կապ ե ունեցել յերկրագործ ու խաշնարած նախնական ժողովուրդների գալնանային դաշտալին աշխատանքների հետ:

Դարնանամուտի հետ միասին կենդանանում ելող բնությունը, արթնանում են նրա արգասարեր ուժերը, զորանում և արեի ջերմությունը և յերկարում լուսի տեղաթյունը։ Նախնական մարդը հավատում եր, թե կա աստված, վորի զորությամբ բանում են հայահատիկներն ու պատղները, աճում բուսականությունը, բազմանում են խաշները։ Բայց բնությունը ձմեռը մեռնում եր, հողն ել քնում եր և պտուղ չեր տալիս ու բուսականությունը վոչնչանում։ բնական ալդ յերկույթները դրանց կապում եյին յերկրագործության, բուսականության աստծու մահվան և նորից կենդանանալու, հարություն տռնելու հետ։

2. Այդ աստվածության բարի կամքն ու տրամադրությունը հայցելու, նրա պաշտպանությունն ու հոգանական յերկրագործն ու խաշնարածը սահմանել եյին հատուկ պաշտամունքներ ու տոներ։ Այդ տոների մեջ անշուշտ ամենամեծ նշանակությունն եր ստանում աստվածների հարության որը, յերբ բնության արթնացումով՝ ձեռնարկվում եյին դաշտային աշխատանքները և խաշներին ու անասուններին դուրս ելին հանում նոր կանաչող հանդեր՝ արածացնելու։ դա մի մոմենտ ե, վոր ուրախության, մեծ հյուսերի, տնտեսական ակնկալությունների բարձր զգացմունքներ եր ծնեցնում։

7. Այդ յերկրագործական աստվածները, ինչպես հավատում եր հնադարյան մարդը, բարի ելակներ ելին ծառայում եյին մարդկանց բարորությանն ու յերջանկությանը։ Նրանք իրենց կյանքը զոհաբերում ելին մարդկանց փրկության համար իրենց մահով քավում եյին նրանց մեղքերը։

Ալղոկես եյին հնաղարյան հեթանոսական կրոնները. և քրմերը մխիթարում ելին ճնշվածներին ու հարստահարվածներին, վորպեսզի նրանք չըմբռստանան տիրող կեղեքիչ պայմանների դեմ, հաշտվեն իրենց ստրկական, թշվառ վիճակի հետ այս աշխարհում, վորպեսզի «բարի աստվածները» փրկություն և աղատություն տան այն աշխարհում։ Այսպես ելին հին աշխարհի բռնակալները, հարուստները՝ կրոնի ու քրմերի միջոցով՝ զսպում աշխատավոր մասսաների դժգոհությունն։

## ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՔՐԻՍՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. Հարություն առնող աստվածների մասին լեզած հին հեթանոսական հավատալիքներն ու կրոնական պաշտամունքները դեռ այսոր ել պտհպանվել են քրիստոնեական կրոնի մեջ։

Քրիստոնելությունն իր ելությամբ սինտետիկ կրոն ե, մի խառնուրդ, համաձուլումն հին հրեական և վերոհիշլալ հնաղարյան ժողովուրդների հավատալիքների։

Քրիստոնության նոր կրոնն ընդունող նախկին հեթանոսները սնվել ելին իրենց դարավոր կրոնական հավատալիքներով, վորոնք ինքնաբերաբար սկսում ելին թափանցել նոր, քրիստոնեական կրոնի մեջ։

Քրիստոնելությունն սկզբներում չուներ իր սեփական պաշտամունքային ձևերն ու ծիսական արարողությունները։ Միայն հետագայում նա սկսեց հետըզհետե լուրացնել ոտար ծեսեր, պաշտամունքալին

արարողություններ, վորոնք հատուկ եյին հեթանոսական, հարություն առնող աստվածների պաշտամունքին:

Ժամանակի ընթացքում ալդ հեթանոսական բոլոր քրիստոները մոռացվեցին, աղոտացան հավատացյալ նոր քրիստոնյաների հիշողության ու ավանդությունների մեջ, և մնաց միտել Քրիստոսը՝ Հիսուս առունուց:

Սրան ապացույց եւ տյն, վոր Քրիստոնեական Զատիկն, այսինքն Քրիստոսի հարության տոնը, սահմանվել եւ միայն 4-րդ դարում, իսկ մինչև ալդ Քրիստոնյա յեկեղեցին չեր կատարում ալս ամենը:

2. Այժ տոնվող Քրիստոսի հարության տոնի մեջ անփոփոխ մնացել եւ ու համառությամբ պահպանվել եւ այն նախնական հավատալիքը, տյն գաղտփարը, թե գարնան արևադարձի հետ միասին արթնանում եւ, հարություն եւ առնում ամրողջ բնությունն իր արգասարեր ուժերով:

Քրիստոնյա հավատացյալը շարունակում է կարծել, ինչպես և նախնադարյան հեթանոսը, թե, Քրիստոսի հարության տոնը ջերմեռանդ և ուրախ կատարելով, գտնում եւ միջոցներ կովելու բնության յերեվութների դեմ, յենթարկում և ծառայեցնում եւ բնության ուժերն իր տնտեսական գործունեյության և իր կյանքի ապահով դոյության նպատակներին:

3. Այս կրոնական հավատալիքի ու տնտեսակատարության տնտեսական—արտադրական նշանակությունը զարմանալի կերպով պահպանվել եւ մեր գյուղական ժողովրդի հավատալիքների ու կենցաղային սովորությունների մեջ, վորոնք կապված են Զատկի տոնակատարության հետ։ Ալդ ազգադրական մնացորդ-

ները մի անդամ ևս ապացուցրւմ են Քրիստոսի հաւրության կամ Զատկի տռնի լերկրագործական ընուլթը։ Այդպիս են զատկական շնորհավորանքները, վորոնք միշտ ուղղեկցում են հացի առատության բերքի հաջողության բարեմաղթություններով։

Վերջապես մեր գլուղական միջավայրում Զատկի տռնին կանաչեղեններից պատրաստվող մի շարք կերակուրները, գառն ու ձուկը, հատուկ թխվածք—խմորեղեններն արտահայտում են հացի ու յերկրագործության աստծու գաղափարը։


4. Յեկեղեցին և հոգեորականությունը շքեղ, հանդիսավոր գուշն են տալիս Քրիստոսի հարության տոնին, իսկ կուրացած հավատացլալ մասսաներն անձնաւուր են լինում վորկրամոլ կեր ու խումի, անմիտ ուրախությունների, արբեցողության։ Այդ ե հարկավոր տիրապետող դասակարգին, կապիտալիստ—կուլակներին, վորպեսզի շահագործվող ժողովրդական մասսաները, շլացած տոնական հանդիսակատարութեներից, անգուսպ արբեցության և կեր ու խումի մեջ մոռանան իրենց թշվառ, անվերջ կեղեքման լենթակա կլանքը, հավատալով, թե այդպես ե սահմանված Շիվերություն։ Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես կրոնը հոգեւոր ճնշման ձևերից մեկն ե, ճնշման, վոր տիրում ե ամենուրեք աշխատավոր զանգվածների վրա, վորոնք տանջվում են չքավորության, կարիքի և կապիտալիստների ճիրաններում։


### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք աեսնում ենք, վոր կրոնն իր եյությամբ հանդիսանում ե հնագույն սովորությունների, կեն-


ցաղացին հին ձեերի ամենամեծ պահպանովը, մտավոր դարգացման կաշկանդովը։ Այդ հանգամանքն ե պատճառ դառնում, վոր իր դարգացման ամբողջ ընթացքում՝ կրոնը հանդիսացել է բոլոր ժողովրդների կյանքում վորպես հետազիմական, հակահեղափոխական ամենախոշոր գործոն։ Արտադրական միջոցների ու հասարակական հարաբերությունների դաստիարային սոցիալական ձեերում՝ կրոնն ու յեկեղեցին միշտ դարձել են գործիք շահագործողների ձեռքում՝ աշխատավորներին ստրկացնելու և ճնշելու տիրապետող դասկարգերի տիրակալությունն ամբապնղելու և այդ ճնշումներին. շահագործումներին, տիրակալություններին տատվածալին սանկցիա տալու համար։

Բոլոր կապիտալիստական յերկրներում բուրժուազիան, աղնվականությունն և հոգեօրականությունը՝ բոլոր հետազեմ տարրերի մասնակցությամբ «փառհեղ» տոնելու լեն «Զատիկը» աշխատավոր մասսաների ուշադրությունը հեղափոխությունից, դաստիարագային պայքարից դեպի կրոնը թեքելու համար։ Մեզ մոտ աշխատավոր մասսան լծված սոցիտլստական շինարարության՝ կարիք չի զգում կրոնի, խավարամը տության և սնոտիապաշտության։ Նա միայն գիտական ձեերի աջակցությամբ պետք է վարի իր տնտեսությունը, դաստիարակվելով մարտնչող մատերիալիզմի գաղափարներով, գիտական կոմմունիզմի վողով։











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038867

4107

ԳԻՒԾ 7 ԿՈՎ. ՄՊՍ. (1 մամուլ)



Օ. Պետրօսյան և Նիմանդ

## ПРОТИВ ПАСХИ

(Тезисы для докладчиков)

Госиздат ССР Армении  
Эревань—1930